

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11»

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 11:27:45-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 15:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1:

Հարգելի մրցույթային հանձնաժողով,
Տեխնիկական բնութագրում պահանջվում է պինդ մարմնային (solid-state) ռադար:
Խնդրում ենք ներկայացնել, թե ինչու է ընտրվել հենց այս տարբերակը, քանի որ համեմատած կլիստրոնային (klystron) ռադարների հետ այն ունի որոշ թերություններ՝

- ավելի ցածր ճշգրտություն մեծ հեռավորությունների վրա,
- ազդակ-աղմուկի (signal-to-noise) խնդիրներ,
- թվային մշակման (digital processing) սահմանափակումներ:

Կլիստրոնային ռադարները լայնորեն կիրառվում են աշխարհի առաջատար համակարգերում (օր.՝ ԱՄՆ NEXRAD) և ապահովում են բարձր հզորություն, կայունություն և երկարաժամկետ հուսալիություն:

Պարզաբանում N 1: Պատվիրատուի կատարված որոշումն է:

Հարցադրում N 2:

Բացի այդ՝

1. **Էներգամատակարարում.** ՏՀ-ում պահանջվում է միայն արևային վահանակներ և մարտկոցներ ≥ 5 օր անջատման դեպքում: Խնդրում ենք ներկայացնել հաշվարկներ, թե ինչ տվյալների հիման վրա է ընտրվել այս մոտեցումը: Ինչպե՞ս է ապահովվելու անխափան աշխատանքը, եթե անջատումը տևի ավելի քան 5 օր:
2. **Պահուստային լուծումներ.** Միջազգային փորձի համաձայն, նման ռազմավարական օբյեկտների համար միշտ նախատեսվում է նաև **դիզելային գեներատոր**՝ որպես վերջին միջոց: Ինչու՞ է ՏՀ-ում այս տարբերակը բացառված:

Պարզաբանում N 2: Պարզաբանում 1 և 2 կետերի: Պատվիրատուն ունի դիզելային գեներատորներ:

Հարցադրում N 3: **Տեխնիկական չափանիշներ.** Խնդրում ենք նշել հստակ թվեր՝

- նվազագույն հայտնաբերման շեմ (dBZ),
- չափման ճշգրտություն (% կամ dB),
- ապահովվող իրական հեռահարություն (կմ),
- հուսալիության ցուցանիշներ (availability %, MTBF ժամերով):

Պարզաբանում N 3: Տեխնիկական չափանիշների նկարագրությունները, պայմանները և պահանջները տրված են Հրավերի Հավելված 5-ի պայմանագրի նախագծի Տեխնիկական Բնութագրի էջ 1, 2, 3-ում:

Հարցադրում N 4: **Ռազմավարական նշանակություն և կրկնակի օգտագործում.** Մետեոռադարը մեր երկրի համար ունի նաև ռազմավարական նշանակություն: Խնդրում ենք պարզաբանել՝ ինչու ՏԲ-ում չեն ներառվել պահանջներ, որոնք կապահովեն համակարգի կրկնակի կիրառումը և բազմառնությունը արդյունավետությունը:

Պարզաբանում N 4: Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ Հրավերի Հավելված 5-ի պայմանագրի նախագծի Տեխնիկական Բնութագրի հետ: Ձեր կողմից նշված պահանջները տրված են: Դրույթ 6-ում. Ավիացիոն արտադրանքներ, Դրույթ 7-ում. Հրդեհի հայտնաբերման և կանխարգելման արտադրանքներ և Դրույթ 8-ում. Ոչ օդերևութաբանական թիրախների հայտնաբերում

Հարցադրում N 5: **Միջազգային լավագույն փորձ.** Կարծում ենք, որ նման մրցույթներում միշտ պետք է հաշվի առնել աշխարհի առաջատար արտադրողների փորձը, որոնք ունեն ներկայացուցչություններ Հայաստանում և կարող են ապահովել ժամանակին և որակյալ սպասարկում: ՏԲ-ում այս կարևոր հարցի վերաբերյալ ոչինչ նշված չէ:

Պարզաբանում N 5: Ձեր կողմից նշված կարծիքի պարզաբանումը տրված է Հրավերի Հավելված 5-ի պայմանագրի նախագծի Տեխնիկական Բնութագրի էջ 14-ում «10-ամյա համապարփակ սպասարկման փաթեթ»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:

Էլեկտրոնային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով